Լիա Սեդրակյանի գույքի աճուրդի կազմակերպման և անցկացման մասին

2026-10-30 09:13:18

Հայտատու	Ֆիզիկական անձինք
Տեսակ	Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ
Հիմք	Սնանկության մասին ՀՀ օրենքի 76-րդ հոդված

20.11.2026թ. ժամը 10:00-ին Լիա Սեդրակյանի սնանկության գործով (ՍՆԴ/1626/04/26) կառավարիչ Արտակ Մարտիրոսյանի կողմից ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց պող. 5 շենք, 109 սենյակում, կանցկացվի Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող, ինչպես նաև Պարտապանի պարտավորությունների կատարման համար գրավադրված գույքերի աճուրդը՝ հրապարակային սակարկությունների միջոցով:
Գույքի սեփականության փոխանցման, պետական գրանցման և հնարավոր վտարման հետ կապված ծախսերը կատարում է գնորդը:
Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝
ա/ֆիզիկական անձի դեպքում՝անձը հաստատող փաստաթղթի պատճենը, իրավաբանական անձանց և անհատ ձեռներեցների դեպքում՝պետական գրանցումը (հաշվառումը) հաստատող փաստաթղթերի պատճենները իսկ իրավաբանական անձանց դեպքում նաև կանոնադրության և ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթերի պատճենները
բ/լիազորագիր, եթե հայտատուն հանդես է գալիս լիազորված անձի միջոցով
գ/աճուրդի մասնակցության և նախավճարի վճարումը հաստատող փաստաթղթերը:
ԼՈՏ 1: - ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Նար-Դոսի 148 հասցեում գտնվող բնակելի տուն: Բնակելի տան հողամասը կրում է 01-006-0218-0056 կադաստրային ծածկագիրը, զբաղեցնում է 260 քմ. մակերես: Հողամասը ծանրաբեռնված է 2 շինությամբ՝ բնակելի տուն՝ 66,7 քմ. մակերեսով և ավտոտնակ՝ 13,5 քմ. մակերեսով: Բնակելի տունը կիսանկուղային հարկով 1 հարկանի քարե շինություն է, կառուցված 1980-ականներին, տանիքը երկլանջ է, պատված թիթեղով, ջրահեռացումը կազմակերպված է, գտնվում է լավ վիճակում: Ավտոտնակը 1 հարկանի քարե շինություն է, միջհարկային ծածկը՝ երկաթբետոն, տանիքը բացակայում է, դարպասներ չկան: Սեփականության իրավունքով պատկանում է Հասմիկ Սեդրակյանին, գրավադրված է «Կոնվերսբանկ» ՓԲԸ-ում՝ Լիա Սեդրակյանի պարտավորությունների դիմաց:

Մեկնարկային գին՝ 33,300,000 ՀՀ դրամ:
ԼՈՏ 2 - ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Սարալանջի փողոց 4/9 հասցեում գտնվող բնակելի տուն: Բնակելի տան հողամասը կրում է 07-002-0089-0335 կադաստրային ծածկագիրը, զբաղեցնում է 126,7 քմ. մակերես: Հողամասը ծանրաբեռնված է 1 շինությամբ՝ բնակելի տուն 259,37 քմ. մակերեսով և 0,22 քմ. մակերեսով պարիսպով: Բնակելի տունը կիսանկուղային հարկով 2 հարկանի քարե շինություն է, կառուցված 1995թ.-ին, տանիքը քառալանջ է, պատված թիթեղով, ջրահեռացումը կազմակերպված է, գտնվում է լավ վիճակում: Սեփականության իրավունքով պատկանում է Լիա Սեդրակյանին, գրավադրված է «Կոնվերսբանկ» ՓԲԸ-ում՝ Լիա Սեդրակյանի պարտավորությունների դիմաց:
Մեկնարկային գին՝ 92,080,000 ՀՀ դրամ:
Մասնակցության վճարը կազմում է մեկնարկային գնի 1 տոկոսը, բայց ոչ ավել, քան նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկը, իսկ նախավճարը մեկնարկային գնի 5 տոկոսը: Աճուրդի մասնակից չհամարվող անձանց համար աճուրդի մուտքի վճարը սահմանվում է 5000 ՀՀ դրամ: Մասնակցության վճարը, նախավճարը և մուտքի վճարը վճարվում են «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ-ում, Լիա Սեդրակյանի սնանկության հատուկ հաշվին՝ 1930099007240300:
Աճուրդին մասնակցել ցանկացողները, ինչպես նաև աճուրդի մասնակից չհամարվող անձիք մինչև 13.11.2026թ. ներառյալ կարող են աճուրդի մասնակցության հայտ ներկայացնել ՀՀ սնանկության դատարան՝ ք.Երևան, Օտյան 53/2 հասցեով:
Աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը: Լոտի վաճառքից հետո հաղթողը և կազմակերպիչը ստորագրում են սակարկությունների արդյունքների մասին արձանագրությունը և տվյալ լոտի վերաբերյալ աճուրդը համարվում է ավարտված: Աճուրդի հաղթողի կողմից արձանագրությունն ստորագրելուց հրաժարվելու կամ արձանագրությունը ցանկացած այլ պատճառով չստորագրվելու դեպքում աճուրդի հաղթող է համարվում նախավերջին ամենաբարձր գին առաջարկած մասնակիցը, նրա առաջարկած գինը համարվում է վաճառքի գին և նրա հետ անմիջապես ստորագրվում է աճուրդի արդյունքների մասին արձանագրություն: Արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու կամ արձանագրությունը ցանկացած այլ պատճառով չստորագրվելու դեպքում մասնակցի վճարած մասնակցության վճարն ու նախավճարը հետ չեն վերադարձվում:
Աճուրդում հաղթող մասնակիցը պարտավորվում է աճուրդի արձանագրությունը ստորագրելուց հետո 10 օրվա ընթացքում ամբողջությամբ վճարել գույքի արժեքը, նվազեցնելով վճարած աճուրդի նախավճարի չափը: Հաղթող մասնակցի կողմից աճուրդի արձանագրությունը չստորագրելու կամ 10 օրվա ընթացքում ամբողջությամբ գույքի արժեքը չվճարելու դեպքում որպես նախավճար մուծված գումարը չի վերադարձվում:

Եթե համապատասխան հայտ ներկայացրած անձը աճուրդին չի մասնակցում կամ մասնակցում է, սակայն չի հաղթում, ապա նրա կողմի վճարված նախավճարը ենթակա է վերադարձման, իսկ աճուրդի մասնակցության վճարը վերադարձման ենթակա չէ:
Աճուրդի մասնակցության վճարը անկախ աճուրդի արդյունքներից հայտ ներկայացրած մասնակիցներին վերադարձման ենթակա չէ:
Աճուրդը անցկացվում է ՀՀ արդարադատության նախարարի 16.03.2020թ. 116-Ն հրամանով հաստատված կարգով:
Վաճառվող գույքի մասին մանրամասն տեղեկություններ ստանալու, ուսումնասիրության և աճուրդի կանոնակարգին ծանոթանալու համար զանգահարել Լիա Սեդրակյանի սնանկության գործով կառավարիչ Արտակ Մարտիրոսյանին, 055-99-47-99 հեռախոսահամարով:
Աճուրդի ընթացքը ձայնագրվում կամ տեսագրվում է կառավարչի կողմից:

37455994799

artak_martirosyan@yahoo.com

ՀՀ, ք. Երևան, Հովսեփ Էմին 16շ., բն. 2